ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿ ՂԱԶԱՐՅԱՆ, «ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ 1800—1870 ԹԹ.»

ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1967 թ., 667 էջ

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ վերջերս լույս տեսավ Հ. Մ. Ղազարյանի «Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ.» ծավալուն մենագրությունը։

Ներկա աշխատությունը գիտականորեն քննարկում է Արևմտյան Հայաստանի հուզումնալից և փոթորկոտ մի ժամանակաշրջան, երբ հայ և թուրք փոխհարաբերությունների մեջ առաջ է գալիս շատ վճռական մի փոփոխություն, այն է՝ թուրքական «բանակ-պետությունը» փորձում էր վերածվել ազգային պետության և այդ կապակցությամբ ձգտում էր հպատակ ժողովուրդներին ձուլել կամ ոչնչացնել։ Այլ խոսքով՝ մասնակի ջարդերով ու կողոպուտով հպատակության մեջ պահելու քաղաքականությունը վերածվում է ձուլման կամ ամբողջական գենոցիդի քաղաքականության։

Քաղաքական այս հենքի վրա հեղինակը ուսումնասիրում է արևմտահայերի պատմության նշված շրջանի առանցքային հարցերը՝ բնութագրում ագրարային հարաբերությունները, սոցիալ-տնտեսական կապվածությունը, թուրք և քուրդ ֆեոդալների անջատողական ձգտումների, կառավարության վարած սոցիալական ու ազգային քաղաքականության բիրտ խտրականության, հողային իրավազրկության հարցերը։ Հատուկ ուշադրություն է նվիրված քաղաքային կյանքի հետազոտմանը։ Ցույց է տրվում հայ առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի հեղհեղուկ և անկայուն դրությունը։ Զգալի տեղ է հատկացված թույլ զարգացած այդ բուրժուազիայի և նրանից էլ թույլ զարգացած պրոլետարիատի պայքարին։

Հայ ազգային-ազատագրական շարժումները միշտ էլ եղել են նվաճողների վարած հայաջինջ քաղաքականության ծնունդը, հանդիսանալով թուրք-պարսիկ դարավոր բռնակալության դեմ ուղղված երկարատև դժգոհության և ընդվզումի գայրալից պոռթկումներ։

Բազմաթիվ են այն օտար հեղինակները, որոնք զբաղվել են Արևմտյան Հայաստանի տվյալ պատմաշրջանի սոցիալ-տնտեսական հարցերով։ Դրանք հիմնականում միակողմանի են՝ հակված լինելով պաշտպանելու կամ հող պատրաստելու սեփական պետության քաղաքական, նվաճողական նկրտումներին։ Ուշադիր վերլուծելով օտար հեղինակների հրապարակած տվյալները, հեղինակը բերում է արժեքավոր և հետաքրքիր փաստեր, որոնք արտացոլում են ճշմարտությունը տվյալ ժամանակաշրջանի վերաբերյալ։

Հ. Ղազարյանի գրախոսվող աշխատության դրական կողմերից մեկն այն է, որ նա ձեռքի տակ ունեցել է բազմաթիվ և հարուստ բազմալեզու աղբյուրներ՝ տպագիր կամ չտպագրված։

Արևմտահայաստանը ուսումնասիրելիս օտարները շատ հաճախ հենվում են միայն թուրքական պաշտոնական տվյալների կամ իրենց լեզվով մատչելի սակավաթիվ, հաճախ էլ անճիշտ աղբյուրների վրա։ Դա հարցի միակողմանի և անվստահելի մոտեցում է։ Այդ միակողմանիությունը գրախոսվող մենագրության մեջ հերքվում է առկա բազմալեզու գրականության և հայ հեղինակների բերած տվյալների հիման վրա։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանի վերլուծությանը պետք է մոտենալ մեծ զգուշությամբ։ Այնինչ, որոշ եվրոպացի հեղինակներ թուրքական և օտար աղբյուրների տենդենցիոզ տվյալները ընդունում են որպես բացարձակ ճշմարտություն և օբյեկտիվորեն դառնում են սուլթանական բռնակալության պաշտպանության պրոպագանդիստներ։ Նման աղբյուրներին մարքսիստ պատմաբանը մոտեցել է քննադատաբար։ Նրա տեսադաշտից դուրս չեն մնացել հայկական բոլոր խավերի ներկայացուցիչները, հետագեմ Զամուրճյանից մինչև դեմոկրատ հեղափոխականները։ Դրական երևույթ է նաև այն, որ ստվար հրատարակությունների կողքին տեղ են գտել պարբերական մամուլը, արխիվային անտիպ վավերագրերը և այլն։

Բազմավաստակ պատմաբան Լեոյի աշխատություններին Հ. Ղազարյանը մոտեցել է քննադատաբար։ Հեղինակը ճիշտ է նկատել Ա. Կարինյանի սխալները և կարողացել է նշել նրա ոչ ճիշտ ընդհանրացումները արևմտահայ գյուղացիության դրության, Թուրք կառավարության խտրականության, ժողովրդի գույքի, կյանքի, պատվի անապահովության և շատ ուրիշ հարցերի կապակցությամբ, և միանգամայն իրավացի եզրակացնում է. «Դաղափարական պայքար մղելով լիբերալ ու դաշնակցական հեղինակների դեմ, երբեմն (շատ հաճախ —Կ. Ք.) պատմական իրողությունը զոհում է քաղաքական կոնյուկտուրային» (էջ 25)։

Առանձին հեղինակներ չարաչար սխալվում են, ոչ ճիշտ դիրքերից են ելնում, երբ Արևմտյան և Արևելյան Հայաստանը դիտում են որպես անջատ միավորներ՝ իրար խորթ և օտար, և հաճախ հակադրում են մեկը մյուսին, պաշտպանելով այն անընդունելի թեզը, որ իբր թե Արևելյան Հայաստանի հայերն են, որ հրահրել են Արևմտյան Հայաստանի ազգային-ազատագրական պայքարը։ Բոլոր դեպքերում էլ հա։ ժողովրդին պետք է դիտել որպես մի միասնական ամբողջություն։

Հեղինակը զգալի չափով օգտագործել է արխիվային նյութեր։ Ցավալի է, սակայն, ինչպես հեղինակն է շեշտում, որ նա հնարավորություն չի ունեցել օգտվելու արտասահմանյան հայ և օտար արխիվային նյութերից։ Այնուամենայնիվ, մենագրությունը խոշոր ներդրում է հայ պատմագրության զարգացման գործում։ Հեղինակին հիմնականում հաջողվել է եղած արխիվային նյութերի, հայ և օտար գրականության, պարբերական մամուլի քննադատաբար օգտագործմամբ տալ Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատկերը՝ ուսումնասիրության ենթակա ժամանակաշրջանում։

* *
*

Հեղինակը արդարացի կերպով նշված ժամանակաշրջանը բաժանում է մինչթանզիմաթյան և ետթանզիմաթյան շրջանների։

Առաջին շրջանի համար բնորոշ է մասնակի կեղեքումներով, ջարդերով հայ և քրիստոնյա հպատակ մյուս ժողովուրդներին, որպես շահագործման աղբյուր պահելը, պարագիտ տարրի կյանքը ապահովող մի գործոն, թույլ չտալով, որ նրանք աճեն թվապես և ունեցվածքով, որ միշտ զգան իրենց ոչնչությունը, դիրքի և ունեցվածքի անկայունությունը։

Երկրորդ շրջանի համար բնորոշ է զանազան միջոցների գործադրմամբ հպատակներին ձուլելու քաղաքականությունը, որի ձախողմամբ որդեգրվում է ամբողջական գենոցիդի քաղաքականությունը։

«Մասնակի» կամ «ընդհանուր» ջարդն ու կողոպուտը, մի խոսքով Թուրք պետականության որդեգրած քաղաքականությունը հայ և մյուս «ռայա» կոչված ժողովուրդների նկատմամբ, կարող էր միայն ազգային-ազատագրական պայքար առաջացնել նշված ժողովուրդների մոտ։ Հայ ազատագրական շարժումը արգասիք էր բռնակալական լծի։

Պետք է նշել, որ Հ. Ղազարյանը լիովին գիտական մոտեցում է ունեցել իր առջև դրված պրոբլեմների լուծմանը և գնահատմանը։

Առանց ուսումնասիրելու սոցիալական ու քաղաքական այն պայմանները, որոնցով շրջապատված էր արևմտահայությունը, հնարավոր չէ ճիշտ բնորոշել այնտեղ տեղի ունեցած դեպքերը։ Պատահական չէ, որ մենագրության առաջին մասը հատկացված է «ագրարային հարաբերություններին մինչև թանզիմաթը»։

Ագրարային հարաբերությունների ճշգրիտ պատկերը տրված է երկու գլուխներում, որոնցում մարքսիստական վերլուծությամբ պարզորոշ պատկերվում են սուլթանական Թուրքիայի տնտեսական ֆոնի վրա արևմտահայերի, հայկական Կիլիկիայի հայ գաղթօջախների իրավիճակը, վարչական միավորները (Ա գլուխ), քաղաքները, արդյունաբերությունը և առևտուրը (Բ գլուխ)։

Օսմանյան կայսրությունը խճճված էր կապիտուլյացիաների մեջ։ Թուրքական ռազմական ֆեոդալիզմը նոր պայմաններին հարմարվելու իր անընդունակությամբ արժեքազրկվում էր միջազգային և սեփական ժողովրդի հասարակական կարծիքի առաջ։ «Ճամբար պետությունը» անհանդուրժելի էր նոր օրերին, իսկ Թուրքերը իրենց գոյությունը միայն «ճամբար պետության» մեջ էին տեսնում։ Օրվա պահանջների հետ քայլել չկարողանալուց էլ հենց բխում էին կայսրության նորանոր տրոհումները, ֆինանսական քայքայումը, օտարերկրյա կապիտալի գերիշխանությունը տնտեսական կյանքում և այդպիսով իմպերիալիստական պետությունների ազդեցությունների հաստատումը Թուրքիայում։

«Օսմանյան երեքմնի հզորության անկման գլխավոր պատճառը,—իրավացիորեն նկատում է հեղինակը,—կայսերապետության մակարուծային բնույթն էր, որի հետևանքով գնալով ուժեղանում էին կենտրոնախույս ուժերը, հաճախակի և անվերջ դառնում միջցեղային զինաբախումները ու ներքին ապստամբությունները» (էջ 39)։

Քանի որ կայսրության մեջ ֆինանսական քաոսը խրոնիկական էր դարձել ու անբուժելի, բնականաբար, քայքայումը օրեցօր վերածվում էր փոսախտի։

Ավատապետերի և կենտրոնական կառավարության փոխադարձ անզիջող պայքարի մեջ ամենից ավելի տուժողն էր ռայան։ «Թե՛ կենտրոնական կառավարությունը, և թե՛ ֆեոդալ ցեղապետներն ու դերեբեյիները իրենց մեջ կուտակված մաղձը թափում էին թույլերի, անպաշտպանների, այլադավան հպատակների գլխին, ծծում նրանց արյունը, քաղաքականապես գետնաքարշ դրության դատապարտում։ Քրիստոնյա այլազգիների սոցիալ-քաղաքական թշվառ կացությունը հասել էր իր եզրին և այլևս դիմանալու հնարավորություն չկար» (էջ 41)։

Փոսախտից տառապող որոշ պետական գործիչներ (Սելիմ III, Մահմուդ II սուլթաններ, Մուստաֆա և Ռաշիդ փաշաներ) փորձեցին պետությունը «եվրոպականացնել», ասիական «բարբարոսությունը» ոչնչացնել՝ դիմելով ամենաբարբարոսական միջոցների (ենիչերիների զանգվածային ջարդերը)։ Վրացի Ռեշիդ փաշայի խորհրդով Մահմուդ II սուլթանը ձեռնարկեց դերեբեյիների ոչնչացմանը։

Վարչության ղեկը դերեբեյի կամ սուլթանի ներկայացուցչի ձեռքում լինելը ոչնչով չէր փոխում ռայայի անմխիթար դրությունը։ Քաղաքականության մեջ երկվությունը առաջվանից ավելի ծանր էր իշխում, քանի որ հիմա նա իրեն համարում էր ժամանակավոր և փորձում էր հնարավորին չափով շատ օգտվել իր դիրքից։

Սուլթան Սելիմ I-ը 1514 թ. քրդերին հրապուրեց դեպի նստակեցություն և ստեղծեց դերեբեյություններ, գլխավորապես, որպես սահմանային պահապան ուժեր։ Կառավարության և դերեբեյիների միջև սրվող հակասությունները հարթելու համար քուրդ ցեղապետերը ներգրավվեցին վարչական ապրատի մեջ։ Որպես այդպիսին, նրանք ավելի մեծ առիթ ու միջոց ունեցան անպատիժ կողոպտելու և սպանելու։

«Մինչև թանզիմաթը,—գրում է Ղազարյանը,—Թուրքիայի վարչակարգերը նեխել էին, դարձել երկրի արտադրողական ուժերի քայքայման, պետության թուլացման, ժողովրդի կեղեքման, հետևաբար, դժգոհությունների ալիք բարձրացնելու գլխավոր պատճառներից մեկը։ Սակայն Թուրքիան կամ սուլթանական միահեծանությունը վաղուց ի վեր դարձել էր անվանական հասկացություն» (էջ 53)։ Այդ «անվանական հասկացությունը» հատկապես ճիշտ էր Հայաստանի այն մասերի համար, որտեղ տիրապետում էին քուրդ ցեղապետերը (Բաղեշ, Դերսիմ, Աղբակ, Ջուլամերկ, Տիգրանակերտ, Խոշաբ և այլն), ինչպես նաև Կիլիկիայի Գոզանօղլու թուրքմենները։ «Արևմտյան Հայաստանում և հայկական Կիլիկիայում,— գրում է հեղինակը,— մոլեգնորեն գործում էին ֆեոդալական կիսանկախ իշխանապետությունները՝ քուրդ, ավշար ու թուրքմեն ցեղապետերը, որոնց սանձարձակությունը հասել էր իր գագաթնակետին» (էջ 65), շնորհիվ թուրք վարչության ապիկարության, որ հենվում էր «բաժանիր, որ տիրես» քաղաքականության։ Թող հպատակները զզվոտեն, որ թուրք պաշտոնյան հնարավորություն ունենա նրանց գործերին միջամտելով ապրել։ Մինչև 1830 թ. պետական քաղաքականության հիմնական գիծը այդ էր եղել Թուրքիայում։ Այն լեռնագավառներում, որտեղ կար հայ-քրդական միասնություն կամ զուտ հայկական գավառական կիսանկախություն, թուրքերը աշխատում էին ազգամիջյան կռիվ և ատելություն հրահրելով թուլացնել և ապա նվաճել մեկ առ մեկ։ Թուրքերը երկար ժամանակ փորձում էին սեպ խրել հայ-քրդական բարեկամության մեջ և այդ, ի վերջո, նրանց հաջողվեց։

Անտերության, անապահովության, անիշխանության, սանձարձակ մոլեգնության մեջ, բնականաբար, սուր կերպով դրվում էր հայ ազգային-ազատագրական պայքարի անհրաժեշտությունը ամբողջ ժողովրդի կողմից։ Կարիք չկար արտաքին ազդակին։ «Դրսից թե տեղից» վեճը անտեղի է հայ ազգային-ազատագրական շարժման գնահատման գործում։

Հայ մարդու համար ամենից վտանգավոր բանն էր հարստանալը Թուրքիայում։ Հենց ստացվածքի, պատվի ու կյանքի անապահովությունն էր, որ արգելակում էր արտադրողական ուժերի զարգացումը Թուրքիայում։ Թուրքիան ղեկավարվում էր բացառապես շարիաթով, որի համաձայն գյավուրը զուրկ էր ամեն տեսակի իրավունքներից։ Հ. Ղազարյանը միանգամայն իրավացի է, երբ նշում է, որ թուրքական «օրենսդրությունը այլ բան էր, փաստացի իրավիճակն այլ» (էջ 95)։ Ռայայի անձն ու ունեցվածքը ապահովող ոչ մի երաշխիք չկար։ Հարկադրաբար հրատարակված օրենքները առաջին օրից «լոկ թղթյա կարգադրություններ էին» (էջ 96)։

Գրքում պատշաճ բարեխղճությամբ ուսումնասիրվել ու քննարկվել են հարկային սիստեմը, նրա տարատեսակները, քրիստոնյա և մուսուլման հարկատուի միջև եղած խտրականությունը։

Հ. Ղազարյանը միանգամայն իրավացի է, երբ չի ձայնակցում այն հեղինակներին, որոնք եկեղեցական տուրքերի գանձումը լոկ շահադիտական կորուստ են նկատում։ «...Սխալ կլիներ,— ասում է նա,—հայ հոգևորականության հարկապահանջությունն ընդհանրապես հավասարեցնել պետության ու քուրդ վերնախավի հարստահարություններին։ Դարեր առաջ պետականությունից զրկված ժողովրդի համար եկեղեցին մի տեսակ պետության դեր էր կատարում... բողոքում հարստահարությունների, բռնության, չարաշահումների դեմ, հասուն մտավորականության բացակայության պայմաններում ուղղություն տալիս ազգի քաղաքական ազատագրական ոգորումներին» (էջ 129)։

Բալկաններից Փոքր Ասիայի վրայով մինչև Աֆրիկայի անապատները տարածվող թուրքական կայսրությունը տիրել էր շատ երկրների, որոնցում դարեր շարունակ եղել էր հնօրյա քաղաքականություն, կուլտուրա, արհեստ ու արվեստ։ Թուրք տիրապետությունը այդ բոլորին ոչ թե վերջակետ դրեց, այլ հետ մղեց մինչև «ֆեոդալիզմի ամենարարբարոսական ստադիան»։ Միակ բանը, որ անկում չկրեց Օսմանյան կայսրությունում, նույնիսկ առաջընթաց ունեցավ, դա պալատական դավադրության, ժողովուրդը կեղեքելու, բարքերի ապականության բնագավառն էր։ Ղազարյանը համոզիչ վավերագրերի հիման վրա տալիս է թուրք բռնակալության տակ քաղաքների, արդյունաբերության, առևտրի ու գիտության անկումը։ XIX դարի 60-ական թվականներին ասպարեզ իջավ ազգայնամոլ, օտարատյաց, վայելքի ու իշխանության ծարավի թուրքական բուրժուազիան, որն իրականում բուրժուազիա էլ չէր, այլ պալատական շրջաններում խցկված բախտախնդիրների մի ոհմակ, որն անընդունակ լինելով դիմադրելու քրիստոնյա հպատակների միջից ելած արդյունաբերողների մրցմանը, ջանում էր իր ունեցած պաշտոնական հնարավորություններով՝ ջարդերի միջոցով ասպարեզից վանել մրցակիցներին։ Չենք սխալվի, եթե ասենք, որ այս մրցությունն էր բանալին հետագայում գենոցիդի անցնելու քաղաքականության։

Տեղին է Ղազարյանի դիտողությունը թուրք վայ-պատմաբանների կատարած կեղծարարության առթիվ։ «Բանը նրանումն է,—ասում է Ղազարյանը,—որ ոչ միայն անցյալի մի շարք պատմաբաններ, այլև ժամանակակից «Թուրքիայի պատմության ընկերության» անհարգարժան անդամները, թուրքական կոնգրեսմենները, արդարացնելով նախորդների վարած հայաջինջ քաղաքականությունը, ջանում են ուրանալ արևմտահայերի գոյությունը Թուրքիայում, ժխտում են նրանց կատարած տնտեսական էական դերը Արևմտյան Հայաստանում, էլ չենք ասում հայաբնակ մյուս քաղաքներում ու մայրաքաղաքում» (էջ 144)։

Անհերքելի փաստերի վրա հիմնվելով, Ղազարյանը ցույց է տալիս, որ Հայաստանի հնօրյա մեծ ու փարթամ քաղաքները թուրքական տիրապետության հետևանքով ոչնչացան, դարձան ասիական հետամնաց գյուղեր։ Հեղինակը բազմաթիվ փաստերով տալիս է հայկական քաղաքների անկման ու թուրքական քաղաքների վերածման աստիճանական ընթացքը։ Հակառակ այդ բոլոր աննպաստ պայմաններին, իրավազրկված հայությունը հանդիսանում էր Արևմտահայաստանի բոլոր տեսակ բարիքների արտադրման հիմնական աղբյուրը, լուսավորության, գյուղատնտեսության, առևտրի հիմնական խարիսխը։ Քաղաքների և գյուղերի բնակչության նոսրացումը, առևտրի, արդյունաբերության և գյուղատնտեսության հետադիմությունը ստույգ նշաններ են երկրի հետամնացության։ Հետամնացության հիմնական պատճառներից մեկը թուրքական տնտեսական քաղաքականությունն էր, ավելի ճիշտ, տնտեսության կառավարման և զարգացման ասպարեզում թուրք ղեկավարների անճարակությունը։

Հ. Ղազարյանը լուսաբանում է զանազան արհեստների գործում հայերի մատուցած ծառայությունները։ Նա գտնում է, որ արհեստները ընդհանրապես նկատի ունեին տեղական կարիքները, որովհետև Թուրքիայում տիրող պայմանները նրանց թույլ չէին տալիս վերաճելու ու ծառայելու համաժողովրդական կարիքներին, դուրս գալու միջազգային առևտրի ասպարեզ։

Երկրորդ մասի առաջին գլուխը նվիրված է Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությանը 1830—1870-ական թվականներին։ Հեղինակը սեղմ ու փաստացի լուսաբանում է պատմական տվյալները, նրանց քննադատորեն ընդունելով կամ ժխտելով և հանգում միանգամայն ճիշտ եզրակացության։ Նա նույնքան հաջողությամբ բնութագրում է թանզիմաթի ու նրան հաջորդող ռեֆորմիստական փորձերի էությունը, Եվրոպայի դիրքը նրանց նկատմամբ, հպատակ ժողովուրդների սպասելիքները և հուսախաբությունները ռեֆորմներից, թուրք պետականության դիրքն ու շարժառիթները այդ ռեֆորմների կապակցությամբ։

Թանզիմաթի խաբեությանը հայերը կրկնակի զոհ գնացին։ Մուսուլման տարրը ավելի քան գազազեց և անհաշտ դարձավ հայերի նկատմամբ։ Հայերն էլ անվերապահ կերպով հավատա-

լով թանզիմաթի ստահոդ խոստումներին, ամբողջ եռանդով ծառայեցին թուրքերին՝ ամրապնդելու թուրքական գերիշխանությունը։ Նույն երևույթը կատարվեց նաև 1908 թ. երիտթուրքական սահմանադրության ժամանակ, անբուժելի հետևանքներով հայերի համար, նոր իրավակարգից օգուտ-ողը նորաթուխ թուրք ազգայնամոլ բուրժուազիան էր, որ այդ շրջանում գտնվում էր զինվորական-կալվածատիրական վերնախավի ղեկավարության տակ։

Մենագրության մեջ պատշաճ ուշադրության են արժանացել Թուրքիայի վարչական բաժանումների, սրանց կրած փոփոխությունների, հետապնդած նպատակների հետևանքները։ Հեղինակը մատը դնում է վերքի վրա, երբ խոսելով վարչական բաժանումների նպատակների մասին, գրում է. «Եվրոպային, մասնավորապես Ռուսաստանին հավաստիացնում էին թանզիմաթով՝ թե վերականգնվում են քրիստոնյաների և ընդհանրապես հպատակ այլազգիների նախկին սահմանները, հետևաբար մեծ պետությունները կայսրության ներքին գործերին միջամտելու առիթներ չունեին»։ Մենք կասեինք՝ թանզիմաթն ու բոլոր տեսակի բոլոր «ռեֆորմները» փոխելով հողատիրության ձևերն ու տերերը, չէին լիկվիդացնում գյուղացիության շահագործման նախկին սիստեմը։ «Փոխվեցին հարկերի անունները, պարհակների ձևերը, իսկ շահագործումն ու ճնշումը շարունակեցին հարցականի նման կորացնել գյուղացու մեջքը» (էջ 254)։ Եթե առաջ հայ գյուղացին վճարում էր միայն քուրդ կալվածատիրոջը, այժմ հարկադրված էր վճարել նաև թուրք կառավարության։ Արևմտյան Հայաստանի տնտեսական ընդհանուր հաշվեկշռում հայ աշխարհիկ հողատերերը կաթիլ էին օվկիանոսի մեջ, «որովհետև խոշոր կալվածատերերը հիմնականում պատկանում էին տիրապետող ազգին ու կրոնին. խոշոր հողատերեր էին մահմեդական մզկիթները, քուրդ ու թուրք շեյխերը, ուլեմաները»։ Ճիշտ կլինի նշել, որ հայկական վանք-եկեղեցիները մեծ կալվածատերեր էին, բայց դրանցից յուրաքանչյուրը «պատկանում» էր մի քուրդ կամ թուրք ազդեցիկ մարդու, և եկեղեցական կալվածների վրա ապրող հայերը աշխատում էին նրանց համար։ Այն քիչը, որ վանքն ու եկեղեցին կարողանում էին ազատել անհագ մահմեդականների ճանկերից, հատկացվում էր դպրոցներին և կաշառատվության, որպեսզի կարելի լիներ հայրենի ավերակների սեփականությունը պահպանել, չթողնել մնացած քիչն էլ ոչնչացվի և հայությունն էլ իսպառ արմատահան լինի Հայաստանից։

Ինչ էլ ասվի կամ գրվի Արևմտահայաստանի հայ գյուղացիության իրավական դրության մասին, նրա ճորտ կամ ազատ լինելու, պարհակների, հողատեր կամ հողազուրկ լինելու մասին, փաստը մնում է փաստ, որ «...սուլթանի մահասփյուռ թաթի տակ հաշմվող, թեկուզ ազատ գյուղացիությունը տնտեսական բարվոք պայմաններում չէր ապրում։ Նա տառապում էր սակավահողությունից, տալիս էր բազմատեսակ հարկեր, կատարում ծանր պարհակներ, ազգային անլուր ճնշումների ենթարկվում» (էջ 265)։

Զեռք բերված ռեֆորմները թափ հաղորդեցին արդյունաբերությանը և առևտրին, իսկ տիրող անապահովությունը ստիպեց ձեռնարկատերերին իրենց դրամագլուխն ու գործունեության կենտրոնը տեղափոխել Թուրքիայից դուրս, գործել եվրոպական ֆիրմաների անունով։ Արտասահմանի այլևայլ կետերում բացվեցին «եվրոպական» ձեռնարկություններ։ Թուրքիայի տնտեսական ստրկությունը կատարյալ և վերջնական էր։ Հայերի համար դրականն այն էր, որ Արևմտահայաստանում առաջ էր գալիս արդյունաբերական բուրժուազիա և բանվորություն, որոնք լծվում էին Հայ ազգային-ազատագրական պայքարին։ Դրա մի անուղղակի հետևանքն էլ այն եղավ, որ «...հայ ազատագրական շարժման ղեկավարությունը թողնում էր Թուրքիայի կենտրոնական քաղաքները և տեղափոխվում «բուն երկիր»՝ Արևմտյան Հայաստան» (էջ 319)։

Նշված ժամանակաշրջանի հիմնական տարբերությունը նախորդից այն է, որ ասպարեզ եկավ ծայրահեղորեն այլամերժ թուրք բուրժուազիան։ Այն շատ շուտով դարձավ սուլթանների տերն ու նրանց քաղաքականության թելադրողն ու հպատակների ամենաոխերիմ թշնամին։ Մենագրության մեջ զգալի տեղ է հատկացվում թուրք բուրժուազիայի հայահալած քաղաքականությանը։ Իբրև տիպական օրինակ բերված է Վանի «մեծ հրդեհը», Բաղեշի հրդեհը։ Այդ քաղաքների շուկաների հրդեհով փաստորեն հայ առևտրականները կորցրին իրենց ամբողջ կարողությունը (էջ 332—337)։ Սրանից հետո էր, որ հայերը համոզվեցին, որ ռեֆորմները ավելի շուտ վնասակար էին, քան օգտակար, և շատերը իրենց դրամագլուխը փոխադրեցին արտասահման կամ օտար անունների պաշտպանությանը հանձնեցին հայրենիքում գործող իրենց արդյունաբերական ձեռնարկություններն ու առևտրական միջոցները։

Մենագրության մեջ, հասկանալի պատճառներով, լայն տեղ է հատկացված գաղութահայ արդյունաբերական բուրժուազիայի դրական դերին ազգային-ազատագրական շարժման մեջ։ Ժամանակաշրջանը հատկանշական է նաև հայերի ազգային ճնշումների խորացումով։ Հեղինակը դրանց շատ էջեր է հատկացրել։ Այնտեղ արդարացիորեն նշվում է, որ բոլոր չարիքների ար-

մատը՝ խտրականության ոգին և բուրժուազիայի նախանձն ու ատելությունն էր, որ «...դարձավ վերջին սուլթանների վարած ռազմա-ֆեոդալական օկուպացիոն քաղաքականության հենքը» (էջ 343)։

Չեն մոռացված նաև եվրոպական դիվանագիտության վնասակար ազդեցությունը, մեծ տերությունների մրցակցության բնույթն ու թողած հետքերը Արևմտյան Հայաստանի հայության կյանքի և ապագայի վրա, իրավացի կերպով դրանց վերագրելով գլխավոր պատասխանատվությունը հայկական ջարդերի և գենոցիդի մեջ։ Բնորոշ և հատուկ դերով տրվում են սուլթանական հայաջինջ քաղաքականությունից առաջացած բոլոր ավերները, որոնք միայն «նախերգանք էին, սաղմը այն ահավոր եղելությունների, որոնց իրականացմամբ սուլթանական լայնատարած կայսրությունը ներկվելու էր արևմտահայերի արյամբ» (էջ 355)։ Հեղինակը գիտականորեն ժխտում է այն թյուր կարծիքը, թե մինչև 1890-ական թվականները Թուրքիան բավարարվել էր հայերի ձուլմամբ, սոցիալ-քաղաքական ճնշումների ուժեղացմամբ։ Նույնիսկ կային մտածողներ, որոնք կարծում էին, որ եթե չլինեին հայդուկային խմբերը, եթե չկազմակերպվեին հայ ազգային կուսակցությունները, կամավորական ջոկատները, Համիդը չէր կարող կազմակերպել Վանի, Սասունի, Զեյթունի ջարդերը։

Երկրորդ գլուխը ամբողջությամբ նվիրված է Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախին։ Մեր կարծիքով, հարկ չկար այն սկսել բյուզանդական շրջանից։ Դա մենագրության համար ծանրաբեռնվածություն է, անկախ իր պատմագրական մեծ արժեքից (էջ 370—390)։

Սակայն չի կարելի ուրանալ, որ Կ. Պոլսի և հատկապես Զմյուռնիայի հայ գաղթօջախների ինչպես միջնադարյան, այնպես էլ XIX դարի պատմության, սոցիալ-տնտեսական կյանքի վերաբերյալ մարքսիստական պատմագրության մեջ բացակայում են ոչ միայն մենագրություններ, այլև շատ թե քիչ ծանրակշիռ հոդվածներ։ Գրախոսվող գրքի հեղինակը հատիկ-հատիկ հավաքելով փաստեր, պրպտելով արխիվադարաններն ու մատենադարանի ձեռագրերը, հարուստ նյութ է հավաքել արևմտահայ այս գաղութների պատմության վերաբերյալ, քննաբար վերլուծել այն և տվել հետաքրքիր ու արժեքավոր շարադրանք։

Ղազարյանին այստեղ հետաքրքրել է գաղութում եղած արևմտահայության դասային ու դասակարգային կազմը։ Ամիրայություն, էֆենդիների սերունդ կամ կոմպրադորական բուրժուազիա, բազմահազարանոց արհեստավորություն և պանդուխտներ, ահա այն դասերը, որոնց տնտեսական կյանքը, ապրելակերպը, քաղաքական ձգտումները հակիրճ, բայց համոզիչ ձևով ներկայանում են ընթերցողին։ Չի մոռացված նաև գաղթօջախների հայ ազգաբնակչության թվաքանակը, մշակութային հիմնարկությունների պատմությունը։ Հեղինակը բազմաթիվ փաստեր, թվեր, վիճակագրական տվյալներ է բերել, վիճել թուրք ու եվրոպացի հեղինակների հետ, ճշտելով թե Կ. Պոլսում XIX դարի երկրորդ կեսին ապրում էին 250—300 հազար հայեր, իսկ Զմյուռնիայում 10—12 հազար։

Գաղութահայության տնտեսական կյանքը բացահայտելիս հեղինակը նպատակ է ունեցել իր համար բազա ստեղծել, ապա շարադրել հասարակական-քաղաքական շարժումների պատմությունը։ Առանձնապես հետաքրքիր ու նոր ձևով է ներկայացված արևմտահայերի «Ազգային սահմանադրությունը»։ Նա ժխտել է բուրժուական այն պատմաբաններին, որոնք չափը անցկացրած գովաբանել են այդ ակտը, սակայն քննադատել է նաև այն մարքսիստ պատմաբաններին, որոնք քաղաքական կոնյուկտուրայից ելնելով՝ թերագնահատել են սահմանադրությունը։ Ղազարյանը վեր է հանել բոլորովին չօգտագործված արխիվային փաստեր, հանգամանորեն շարադրել սահմանադրական պայքարի պատմությունը, ցույց տվել աշխատավորական զանգվածների, արևմտահայ առաջադեմ մտավորականության ծավալած համառ, զոհաբեր պայքարի դերը Ազգային սահմանադրության հաստատման գործում։ Դրական գնահատելով սահմանադրությունը, հեղինակը արժեքավորում է նրա համար ծավալված շարժումը, որը պայքարի հրապարակ հանեց խավարի ու թմրության մեջ նիրհող արևմտահայությանը, նրան հաղթանակի հույս ներշնչեց։

Աշխատության մեջ հատուկ ու ընդարձակ գլուխ է նվիրված արևմտահայերի մղած ազգային-ազատագրական շարժումներին 1850—60-ական թվականներին։ Այս մասին, իհարկե, կան աշխատություններ, հոդվածներ, սակայն գրախոսվող գրքի սույն բաժինը գերազանցում է իր բոլոր նախորդներին ոչ միայն հարուստ ու պատկերավոր շարադրանքով, այլև մատակարարած նոր փաստերով, դրանցից հանված ինքնատիպ ու համոզիչ եզրակացություններով։

Օգտագործելով Երուսաղեմի մատենադարանից միայն վերջերս ստացած ձեռագիրը Զեյթունի ապստամբության վերաբերյալ, Փարիզից ուղարկված Թ. Ագատյանի արխիվի նյութերը. Նապոլեոն III-ին ուղարկված և ստացած գրությունները, հեղինակը ընդարձակ տեղ է տվել

ինչպես 1829 թ., այնպես էլ 1832, 1841 և 1860 թվականների Զեյթունի վրա կատարած թուրքական արշավանքների պատմությունը։ Բոլորովին նոր են ու մինչ այդ անհայտ՝ Զեյթունի ստացած հրովարտակի նորոգման, իշխաններին Կ. Պոլիս կանչելու, շքանշաններով պարգևատրելու, հայ-թուրքմենական հարաբերություններին նվիրված էջերը, դրանք հաստատող վավերական փաստերը։

Պատմական լայն ֆոնի վրա է կերտված Զեյթունի 1862 թ. հերոսական ապստամբության պատմությունը։ Այստեղ, խոսելով ռազմական գործողությունների մասին, հանգամանորեն անդրադառնալով երկու կողմերից հանված բանակի ֆվի ճշտմանը, տեղաշարժմանը, Ղազարյանը հատուկ ուշադրություն է դարձրել միջազգային հարաբերությունների պատմությանը։

Բացահայտված են Նապոլեոն III-ի կառավարության վարած «հայասեր» քաղաքականության դրդապատճառները, սակայն հավասարության նշան չի դրված Ֆրանսիայի ու Անգլիայի միջև։ Իրավացիորեն հեղինակը չի ուրանում Ֆրանսիայի դիրքի դրական հետևանքները, սակայն խիստ քննադատված են Թուրքիային պաշտպան կանգնած, նրանից հայ ժողովրդի հաշվին համեղ պատառներ կորզած Անգլիայի դիրքորոշումը։

Զեյթունի հերոսամարտերը արձագանք գտան Պոլսի ու Զմյուռնիայի, Մոսկվայի ու Թիֆլիսի, Կալկաթայի ու Ինգոնեգիայի հայ գաղութներում։ Գրքում գեղեցիկ է շարադրված այդ պատմությունը, ցույց են տրված արձագանքները նաև պարբերական մամուլի, գեղարվեստական գրականության, հատկապես պոեզիայի մեջ։

Հատուկ ուշադրություն է դարձված արևմտահայ մտավորականության ընդհատակյա գործունեությանը, բացահայտված է գաղտնի կոմիտեի գոյության փաստը Կ. Պոլսում, ինչպես նաև Զմյուռնիայի հայ մտավորականության մասնակցությունը այդ պայքարին։ Ընթերցողն այստեղից տեղեկանում է, որ Հ. Սվաճյանը, Մ. Մամուրյանը, Մ. Պեշիկթաշլյանը, Ս. Թագվորյանը և ուրիշները ոչ միայն հրապարակախոսներ էին, այլ նաև պրակտիկ, քաղաքական գործիչներ, որոնք կապեր ունեին ապստամբ Զեյթունի հետ և ջանում էին ժողովրդին ոտքի հանել, համընդհանուր պայքարի միջոցով թոթափել սուլթանական բռնապետությունը։

1860-ական թվականների Արևմտյան Հայաստանում ծավալված հայ ազատագրական շարժումների մասին առանձին էջեր կան մարքսիստական գրականության մեջ, ըստ որում իրրև թե Քզի, Ջարսանջակի, Մուշի շարժումներն ուղղված էին սուլթանների դեմ։ Ղազարյանը հիմնավոր շարադրում է Վանի 1862 թ. զինված ապստամբության պատմությունը, միաժամանակ ապացուցում, որ Ջարսանջակի ու Մուշի շարժումներն ուղղված էին ոչ թե թուրքական բռնապետության, այլ քուրդ դերեբեյիների դեմ։ Նա իր այս հետաքրքիր թեզը հիմնավորում է նոր ու արժեքավոր փաստերով, ձեռագրերից, հայատառ թուրքերեն գրականությունից հանած քաղվածքներով։

Աշխատության ամենահետաքրքիր ու արժեքավոր բաժինը նվիրված է 1850—60-ական թվականների արևմտահայ հասարակական-քաղաքական հոսանքների պատմության շարադրանքին։ Այստեղ երևացել է, որ հեղինակը հասարակական մտքի պատմության ուսումնասիրության մեջ վարպետացել է։ Չէ որ տարիներ շարունակ նրան զբաղեցրել է Գր. Զիլինկիրյանի, Մ. Մամուրյանի, Հ. Սվաճյանի, Ստ. Ոսկանյանի, Սրբուհի Տյուսաբի և այլ գրողների ու հրապարակախոսների կյանքի, հասարակահայեցության հետազոտումը։ Ընթերցողին վաղուց են ծանոթ վերոհիշյալ մտավորականների մասին նրա գրած մենագրությունները, հոդվածները։ Ղազարյանի տքնաջան աշխատանքով լույս աշխարհ եկան Ս. Տյուսաբի ու Մ. Մամուրյանի «Երկերի» միհատորյակները, ընդարձակ ծանոթագրություններով, առաջաբանով։ Նրա գրչին են պատկանում ՀՍՍՀ ԳԱ գրականության ինստիտուտի հրատարակությամբ լույս տեսած «Հայ նոր գրականության պատմության» համապատասխան գլուխները, որոնք ժամանակին բարձր գնահատականի արժանացան ոչ միայն Սովետական Հայաստանում, այլև սփյուռքում։

Ուրեմն տարիներ շարունակ զբաղվելով արևմտահայ գրողների ու հրապարակախոսների ժառանգության խորը հետազոտությամբ, Ղազարյանը այստեղ ընդհանրացրել է իր կատարածը և յուրովի բնորոշել արևմտահայ հասարակական-քաղաքական հոսանքները։ Այդ մասին ոչ մեզանում, ոչ էլ արտասահմանում ուսումնասիրություններ չկան, սակայն կան հեղինակներ, որոնք իրենց գործերում այս կամ այն կերպ անդրադարձել են հիշյալ խնդրին։ Մարքսիստ պատմաբանների մի խումբ կարծիք է հայտնել, թե արևմտահայ իրականության մեջ 50—60-ական թվականներին եղել են միայն երկու հոսանք՝ լիբերալ բուրժուական և հեղափոխական դեմոկրատական, մյուս խումբը նկատել է նաև կղերա-պահպանողական հոսանքը և դարձրել երեքը։

Ղազարյանը չընդունելով ոչ առաջինների և ոչ էլ երկրորդների ստորաբաժանումները, մասնագիտորեն ուսումնասիրելով պարբերական մամուլը, եղած արխիվային նյութերը, եզրակացնում է, որ այդ տասնամյակներին ձևավորվել էին հասարակական-քաղաքական չորս հոսանքներ.

այն է ամիրայության շահերի արտահայտիչ կղերա-ամիրայական հոսանք, կոմպրադորական բուրժուազիայի, կամ էֆենդիների սերունդը ներկայացնող լիբերալ-բուրժուական հոսանք, դավառահայ առևտրա-արդյունագործական բուրժուազիայի շահերը պաշտպանող, դավառում գործող ազգային պահպանողական հոսանք և հայ աշխատավորական զանգվածների սոցիալ-քաղաքական ազատության համար պայքարի ելած ազգային-դեմոկրատական հոսանք։

Ինչպես տեսնում ենք հեղինակը հոսանքների գործունեությունը բնորոշելիս ցույց է տալիս, թե նրանցից որը ո՞ր դասակարգի շահերն էր պաշտպանում։ Սա դժվար ու վիճարկություն վերցնող խնդիր է և եթե չլիներ գրքի առաջին մասի շարադրանքը, ապա հեղինակը նույնպես ընդդիմախոսներ կունենար։ Սակայն նա տնտեսության պատմությունը շարադրելիս նախօրոք նկատի է ունեցել այդ հանգամանքը, արևմտահայության դասային ու դասակարգային կազմը սկզբում ներկայացրել, ապա նոր անցել է հասարակական մտքի ուսումնասիրությանը։ Այս տեսանկյունից նայելով՝ Ղազարյանի մոտեցումը նոր է, համոզիչ, գոնե շատ ավելի համոզիչ, քան իր նախորդներինը։

Հասարակական հոսանքները բնորոշելիս նա քարացած սխեմաներ չի առաջադրում, այլ երևույթները տեսնում է իրենց շարժման, զարգացման մեջ։ Նշենք, որ կղերա-ամիրայականների գործունեության սկզբնական շրջանի դրական ու ստվերոտ կողմերը դիտելիս, հեղինակը համոզում է մեզ, թե 70-ականներին, տնտեսական ասպարեզում ամիրայության կրած պարտության հետ մեկտեղ, պարտվեց և պատմության բեմահարթակից վերացավ այս հոսանքը։

Լիբերալ-բուրժուական հոսանքը դիտվում է իբրև 1850-ական թվականների լուսավորական, միասնական շարժման աջ թևը։ Ուրեմն մինչև Զեյթունի հերոսամարտերը, Ազգային սահմանադրության հաստատումը, Մ. Նալբանդյանի մուտքը Կ. Պոլիս, 1850-ականներին էլ ժողովրդի ազատության մասին ուրույն դիրքավորում ունեցող, լուսավորական շարժման ելած, ապագա բուրժուական-լիբերալներն ու ազգային-դեմոկրատները միասնաբար էին գործում։ Հեղինակը կողմնացույց դարձնելով Վ. Ի. Լենինի դրույթները ընդհանրապես լիբերալների ու դեմոկրատների իրարից անջատվելու վերաբերյալ, ցույց է տալիս նախ նրանց միասնական պայքարը կղերա-ամիրայականների դեմ, ապա հանգամանորեն բացահայտում այն պարագաները, որոնք օրյեկտիվ պատճառ դարձան սրանց իրարից անջատվելու։ Մարքսիստ պատմաբանի համակրանքը ամենուրեք ազգային դեմոկրատական հոսանքը կազմող, հայ առաջադեմ գործիչների կողմն է։

Պատմագրության մեջ նոր են ու ուրույն այն էջերը, որոնք նվիրված են ազգային-պահպանողական հոսանքին պատկանող գործիչների աշխարհայացքի բնորոշմանը։ Նա ճիշտ է նկատում, որ պահպանողական բառը հաճախ ուսումնասիրողներին շփոթության մեջ է գցել։ Գավառի ու ազգի լեզվի, բարքերի, ժողովրդին ասիմիլացումից պահպանող այս գործիչները ավելի էին կապված Արևմտյան Հայաստանի ազգարնակչության հետ և ավելի առաջադեմ դիրքերում էին, քան արևմտահայ բուրժուական լիբերալները։ Սակայն Մ. Խրիմյանը, Գ. Սրվանձտյանը և ուրիշները 1850—60-ականներին գրաբարապաշտ էին, դեմ էին կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը, եվրոպական կապիտալի Թուրքիա ունեցած մուտքին։ Նրանք հեռու էին սուլթանների տիրապետությունը զինված ապստամբության միջոցով տապալելու մտադրությունից, իսկ զենքի «հատ ու կենտ կողերը ուղղված էին քուրդ դերբեյության դեմ»։

Իրեկվա պահպանողական բեռը թոթափելով, Մ. Խրիմյանն ու իր հետևորդները «երկնեցին հեղափոխական կազմակերպություններ Վանում, Կարինում» և, Ղազարյանի իրավացի դիտարկմամբ, ղեկավարեցին 1870—80-ականներին հայ ազատագրական շարժումները։

Այս բաժնի ամենաընդարձակ հատվածը նվիրված է արևմտահայ ազգային-դեմոկրատական հոսանքի բնութագրմանը, նրա մեջ մտնող գրեթե բոլոր գործիչների պրակտիկ պայքարի, աշխարհայացքի դրական ու ստվերոտ կողմերի բացահայտմանը։ Հեղինակը առաջինն է, որ նկատում է, թե արևմտահայ իրականության մեջ 1850-ականներին դեմոկրատներ կային, սակայն դեմոկրատական հոսանքը դեռևս չէր ձևավորվել։ Նրա ձևավորումն իր ավարտին հասավ 1860-ական թվականների առաջին երկու տարիներին։ Սվաճյանի օրինակը վերցնելով՝ նա ցույց է տվել հոսանքի ղեկավարի ու նրա զինակիցների կատարած դաղափարական էվոլյուցիան։

Գրախոսվող գրքում համոզիչ ձևով ցույց են տրված արևմտահայ դեմոկրատների կատարած դաղափարական էվոլյուցիայի պատճառները, բացահայտված են Մ. Նալբանդյանի հետ ունեցած նրանց կապերը, նրա միջոցով Լոնդոնի ռուս վտարանդիներից կրած ազդեցությունը։ Մ. Մամուրյանի դիմանկարը կերտված է խնամքով, ժխտված է թե Լեոյի և թե մարքսիստ այն պատմաբանների կարծիքը, թե XIX դարի արևմտահայ այդ մեծ մտածողը իրը դեմոկրատական հայացքներ չի ունեցել։

Մ. Մամուրյանի մասին տարիներ առաջ գրած մենագրությունը, «Մեկ լեռին մարդը» վեպին տված նրա առանձին վերլուծությունը, «Երկերիս» ընդարձակ առաջաբանը Ղազարյանին հնարավորություն են տվել այս մտածողին ավելի խորն ուսումնասիրել, քան որևէ մեկը։ Նյութի խորագիտությունը, գործչին էպոխայի մեջ տեսնելը հեղինակին հնարավորություն են տվել համեմատություններ անցկացնել և ճիշտ գնահատել, որ Մամուրյանը 1850—70-ական թվականներին ազգային-դեմոկրատական հայացքներ էր որդեգրել և ուներ նույնիսկ հեղափոխական-դեմոկրատական նկրտումներ, իսկ 1880-ականներին լիբերալ տատանումներ կատարեց և դարձավ լիբերալ գործիչ։ Սակայն դա՝ ոչ թե նրա մեղքն էր, այլ դժբախտությունը։ Փաստորեն Համիդի ռեժիմը ստիպեց մեծ դեմոկրատին պատենավորվել, քիչ հետո նաև նահանջ կատարել, անձն ու գրիչը պաշտպանել յուրաքանչյուր մտավորականին սպասվող, անսպասելի ոչնչացումից։

Ինչպես տեսնում ենք, գրախոսվող մենագրության մեջ առաջ են քաշված ու լուծված բազմաթիվ ու բազմազան խճողված, մինչև այդ չլուծված խնդիրներ։ Մենք լրիվ բաժանում ենք հեղինակի կոնցեպցիան, հարուստ փաստերից արված եզրահանգումները, որոնք գիտականորեն հիմնավորված են։

Մենագրությունից երևում է, որ հեղինակը շնորհիվ իր գիտական բարեխղճության, աշխատասիրության ու ունակությունների հաղթահարել է թեմայի բարդությունները, նոր լույս սփռել այդ ժամանակահատվածի հայ ժողովրդի պատմության մի շարք պրոբլեմատիկ հարցերի վրա, որոնք բավարար չափով կամ բոլորովին քննված չէին մեր պատմագրության կողմից։

Մեթոդոլոգիական ճիշտ ելակետը, Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի՝ Թուրքիայի, Արևելքի, ազգային-ազատագրական շարժումների մասին գրած հոդվածների ու ասույթների խորը ուսումնասիրությունը, պատմականության սկզբունքի կիրառումը, փաստական նյութի բազմակողմանի օգտագործման պայմաններում, հնարավորություն են տվել Հայկ Ղազարյանին ստեղծելու արժեքավոր մենագրություն, որը երևույթ է հայ պատմագրության մեջ։ Գրքի արժեքը առավել բարձրացնում է նրա հեղինակի գեղեցիկ ու հարուստ լեզուն, պատկերավոր ոճը։

Կ. Ն. ՔԱՐԱՄՅԱՆ
Պատմական գիտությունների
թեկնածու, դոցենտ